ՕՐԱԿԱՐԳ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 10)**

04 հուլիսի 2017թ. ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատանքային պայմանների բարելավում» ծրագրի մասին:
(Արտուշ Կիրակոսյան)

5. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգում» ծրագրի մասին:
(Արտուշ Կիրակոսյան)

6. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հառիճավանքի բարեկարգում» ծրագրի մասին:
(Արտուշ Կիրակոսյան)

7. «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագրի մասին:
(Նվեր Արզումանյան)

8. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ամառային դպրոցի կազմակերպում» ծրագրի մասին:
(Շաղիկ Մարուխյան)

9. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ներքին Բազմաբերդ համայնքում ջրագծի կառուցում» ծրագրի մասին:
(Բենիամին Աղամալյան)



**10. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

10.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

10.3 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

10.4 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.5 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.6 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.7 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

10.8 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

10.9 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

10.10 «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.11 «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

10.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

10.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

10.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N Մ-549-Ա որոշմամբ հաստատ-

ված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

10.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

10.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Այբ» կրթական հիմնադրամ):

10.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի N Մ-373-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ):

10.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

10.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

10.20 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

10.21 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 2** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

10.22 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

10.23 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):



**11. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

11.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

11.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-968-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն):

11.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):

11.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

**12. Այլ հարցեր**

12.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-434-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

12.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

12.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N Մ-550-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ):

10/1

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

օգոստոսի 2017 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N ԱԱՄ/ԱեՄ-2--1/ -17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի -ի N 06/3-8/ 9-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 82,339,050 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարի Իզմիրլյան անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Այգեծոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00815501) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀ/ԻՄ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 81,059,050 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀ-04/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀՏՀ-04/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«12» հուլիսի 2017թ.

## «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի բարեկարգում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի երեխաների կեցության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 82.339.050,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 03-ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և | 2017թ հուլիսի 03-ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի30-ը ընկած |

10/1

| | | |
|---|---|---|
| | ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ժամանակահատվածում բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 81.059.050 դրամ,<br>հեղինակային հսկողության իրականացում՝ 480.000 դրամ,<br>տեխնիկական հսկողության իրականացում՝ 800.000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԱՅԳԵԶՈՐ» ՍՊԸ-ի կողմից բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 81.059.050,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից հեղինակային հսկողության իրականացում՝ 480.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 800.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

1011

1011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/14.2/13142-17
19.07.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
14.07.2017թ. N 15/15.1/16186-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարի Իզմիրլյան անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/27607-17
19.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

10/1

«19» 07 2017թ.

No 06/3-8/25336-17

Ձեր No ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.07.2017թ.
թիվ 15/15.1/16186-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարի Իզմիրյան անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

044/27618-17
19.07.17



10/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

17.07.17 N 02/14/12334-17

Ձեր N ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 14-ի 15/15.1/16186-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարի Իզմիրյան անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

975/27262-17

1011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« 17 » 07 2017 թ. N ԱԳ/ՀՀՆ-2-1/7792-17

Ձեր 2017-07-14, 15/15.1/16186-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ««Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին» Հայաստանի ~~Հանրապետության~~ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

ԹԳ0/27377-17
17-07.17

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1012

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**օգոստոսի 2017 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի -ի N 06/3-8/ 9-17 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 14,971,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2017 թվականի հուլիսի 12-ին կնքված N ՀՀ/ԴՏ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 14,971,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«25» հուլիսի 2017թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Օշական գյուղի դպրոցի ուսուցիչների և աշակերտների աշխատանքի և ուսման պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 14.971.500,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 12-ից մինչեւ 2017թ հոկտեմբերի 12-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ հուլիսի 12-ից մինչեւ 2017թ. հոկտեմբերի 12-ը ջեռուցման ներքին համակարգի վերակառուցում՝ 14.971.500 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՎԱՀԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի ջեռուցման ներքին համակարգի ամբողջական վերակառուցում՝ 14.971.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

1/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/14-2/13676-17
27.07.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
25.07.2017թ. N 15/15.1/17045-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/28644-17
27.07.17

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

10/2

«27» 07 2017թ.
No 06/3-8/27034-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 25.07.2017թ.
թիվ 15/15.1/17045-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

944/28687-17
27.07.17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍԿ
Արմավիրա Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

10/2


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am


29.07.17 N 02/14/13362-17

Ձեր N ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 25-ի 15/15.1/17045-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/28976-17
29.07.17

---

10/2


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.a


28.07.17թ. N 01/14-2/2907-17

Հայաստանի Հանրապետությա
կառավարության բարեգործական ծրագրեր
համակարգման հանձնաժողովի նախագա
պարոն Ս. Տեր-Սիմոնյանի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.07.2017թ. թիվ 15/15.1/17045-17 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրը՝ առաջարկում ենք որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Դավայան
հեռ.՝/0232/3-37-74

110/28269-17

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

օգոստոսի 2017 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ՆՇԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի -ի N 06/3-8/ 9-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 79,901,019 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեղրու ՃՇՇԶ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09700228) 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված N Ծ-ԱԾ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճանապարհի նշագծման աշխատանքների իրականացում՝ 79,901,019 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«24» հուլիսի 2017թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգի համաձայն Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի 54.450 մ2 երթևեկելի մասի նշագծում կատարել |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 79.901.019,00 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 20-ից մինչև 2017թ նոյեմբերի 20-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ հուլիսի 20-ից մինչև 2017թ. նոյեմբերի 20-ը նշագծել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի 54.450 մ2 երթևեկելի մասը՝ 79.901.019,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ-ի կողմից նշագծման աշխատանքների իրականացում՝ 79.901.019,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

10/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/14-2/13679-17
27.07.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
25.07.2017թ. N 15/15.1/17044-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետում նշված «հուլիսի 2-ին» բառերը փոխարինել «հուլիսի 20-ին» բառերով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/28668-17
27.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

10/3

«27» 07 2017թ.
No 06/3-8/27035-17
Ձեր No

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 25.07.2017թ.
թիվ 15/15.1/17044-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/28688-17
27-07-17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

---

10/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

29.07.17 N 02/14/13360-17
Ձեր N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 25-ի 15/15.1/17044-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Ծարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/28974-17
29.07.17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐ**

10/3

N 01/14.1/14225-17
«28» 07 2017 թ.

***Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ***
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան***

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հուլիսի 25-ի N 15/15.1/17044-17 գրության տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագրի մասին» ~~որոշման~~ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեմ:

***Հարգանքով՝*** **Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*Կատարող՝ Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ՝ Ք. Քաքարյան 590044*
*Lus75*

036/28829-17
28.07.17

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01 , Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝ minister@mtc.am

10/3

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 27.07.17, N 01.1/14-2/13679-17 | |
| Ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետում նշված «հուլիսի 2-ին» բառերը փոխարինել «հուլիսի 20-ին» բառերով | Առաջարկությունը ընդունվել է: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը |